1059. ԽԱՉՔԱՐ, կիսովին թաղված հողի մեջ. անապատի հյուսիսային կիսավեր սրահի մեջ. խորանի շրջանակի հարթության վրա 1 տող.

ԿՆԿՆՑԱՒԽԱՉՍ ՂԵԿԱՍԵՊՍԿՈՊՍԻՆ:

ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՂՈՒԿԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ծանոթ. Նախորդ հրատարակիչների մոտ, բացի այլ տարբերություններից, նշանակված է նաև թվականը՝ ՉՃ, որը մենք չենք տեսել տեղում:

Հրատ. Սմբատյանց, 513, Լալայան, XXIV, 59,
Լուսանկ. 212

1060. ԽԱՉՔԱՐ, կիսովին թաղված նախորդի մոտ. քիվին 1 տող.

ՄԲԽՉՂԿՍԷՊ·ՍԼԹԱՉՏԻՍ+Ն

ՍԲ. ԽԱՉՍ ՂՈՒԿԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ. Ա(ՌԻ)ԼԹԱՆՉ(Ա)ՏԻՆ:

1061. ԽԱՉՔԱՐ, կիսովին թաղված հողի մեջ. նախորդի մոտ. քիվին 1 տող.

ՄԲԽՉԲՐԷԽՍՓՐՃԱ:ԲՈՅՃԱՒՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ Փ(Ա)ՐԻՃԱ(ՆԻՆ), ԲՈՅՃԱՆԻՆ:

1062. ԽԱՉՔԱՐ, կանգնած անապատի հյուսիսային սրահի մեջ. քիվին 1 տող.

ՄԽԱՉՍԲՄ:ՍԷՎՄԽՆԱՒՆ: ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐ(Ե)ԽԱՒՍ(Ա) Ս(ԵՎ)ԱՏԽԱՆԻՆ:

1063. ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդի մոտ, քիվի կեսը կոտրված, մնացել է հետևյալը.

··ՅՄԱՏԻՐՈՍ:ՔՀՆ

ՍԲ ԽԱՉՍ ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ:

1064. ԽԱՉՔԱՐ, կանգնած է նախորդին կից հյուսիսից, քիվին թերավարտ 1 տող.

ՍԲԽԱՉԲՄԷԽԱՒՍ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ:

Ծանոթ. Շարունակության համար տեղ կա, բայց չի գրված. Նման ձևի արձանագրություններ հաճախ են հանդիպում. դրանք առանց պատվերի շինված խաչքարեր են, որոնք վաճառելիս վարպետը պիտի ավելացներ ննջեցյալի անունը միայն, սակայն ինչ-ինչ պատճառներով չի արվել:

Լուսանկ. 213

## 27. ՎԵՐԻՆ ՔՅՈԼԱԳՐԱՆ (ՀՆՈՒՄ՝ ՓԱԹԱԿԱՆՔ)

Այս գյուղի անունը մոռացված է եղել: Այն վերականգնելու՝ տեղագիր հեղինակների փորձերն էլ ավելի մեծ շփոթություններ են մտցրել հարցի մեջ: Այժմ անմարդաբնակ այս գյուղատեղը Սմբատյանցը անվանում է Կարմիր խաչեր, իսկ հին անունը՝ Վաղավեր, Լալայանը՝ Կարմիր խարաբա և նույնպես Վաղավեր: Թե՛ նոր և թե՛ հին այդ անունները սխալ են: Կարմիր խարաբա գյուղատեղը գտնվում է սրանից 15—20 կիլոմետր արևելք, Կարճաղ-

բլուր գյուղի հանդում և մոտ է Մաքենյաց վանքին, որը մեր որոշմամբ՝ հին Գեթաշեն գյուղն է։ Հնում գոյություն ունեցող Վաղավեր տեղանվան հետ նույնացնելու հիմք է ծառայել իբր այս ավերակների գերեզմանատան մեջ գտնվող մի տապանաքարի վրա ընթերցված Վաղավեր անունը։ Նախ՝ նշենք, որ Ստ. Օրբելյանի ցուցակում հիշատակված Վաղավեր տեղանունը Սոթից գավառի մեջ է և ոչ Գեղարքունի, ապա այն, որ այդ նույնացման հիմք-տապանագիրը նշված տեղագիրներից և ոչ մեկը չի հրատարակել, ինչպես և ամբողջ Վերին Բլուրդանից ոչ մի արձանագրություն չի հրատարակված մինչ այժմ, մի երևույթ, որը թելադրում է ենթադրել, որ տեղագիր հեղինակները անձամբ չեն այցելել այս վայրը, այլ որևէ «ակ-բացուի» խոսքի հիման վրա է առաջացել այս շփոթմունքը և հետևյալ կերպ։ Վերին Բլուրդանի գերեզմանատան մի տապանագիր հաղորդում է՝ ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՌԻԽԱՆԻՆ, ՈՐԴԻ ՋԱԼԱԼԻՆ. ՎԱՂԱԹՆՈՒ ԵԿՕ ՏԵՂՄ ԿԱՄԻՐ ԳՆԱԼ ՏԵՂՆ ԻՒՐ ՀԱՆԳՕ Ի ՔՍ. ԹՎ. ՌՃԻԷ (1678) (№1098)։ Ահա այս Վաղատին տեղանվան սխալ՝ Վաղավեր վերծանումը եղել է շփոթմունքի պատճառը, մանավանդ՝ կոտրված տապանագրի ընդհանուր բովանդակությունից, որ պարզ ասված է որ ՌԻԽԱՆԸ եկվոր է։ Վերջին հանգամանքը տարբեր առումներով հետաքրքիր է իհարկե, մանավանդ որ այժմ էլ Սիսիանի շրջանում գոյություն ունեցող հին Վաղատին գյուղի մասերից՝ Գորիսից, մի ուրիշն էլ է եկել այստեղ, պարոն Լալը, մելիք Տաթևի որդին, և ողբերգական մահով մեռել (№ 1097)։

Վերին Բլուրդան գյուղի հին անունը հնարավոր է վերականգնել բոլորովին այլ ճանապարհով։ Այս գյուղը եղել է մելիքանիստ, առնվազն XIV դարի վերջերից այստեղ են նստել Գեղարքունի գավառի մելիքական տներից Աղբուղյանները կամ կրճատ՝ Պաղիկյանները, որոնց տոհմի գերեզմանները՝ մի քանի սերնդի, գտնվում են այստեղի գերեզմանատան մեջ։ Այս տոհմի բազմաթիվ տապանագրերից և այլ աղբյուրներից երևում է, որ ամենանշանավոր մելիքը եղել է Թանկրիղուլին, որը Գեղարքունիի տանուտերերի և մելիքների հետ ստորագրել է 1513 թ. այն փաստաթուղթը, որով Գեղարքունի գավառը հաստատվում է Տաթև վանքի թեմի մեջ[1]։ Եթե այս փաստաթղթի տակ Թանկրիղուլու ստորագրությունը երկրորդ անգամ է գրվում, ապա նույն Տաթևի վանքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային և արևելյան պատերի վրա գրված մի արձանագրության մեջ Թանկրիղուլը առաջին ստորագրողն է։ Այդ արձանագրությունը որոշում է, որ Գեղարքունիի և Սոթքի գյուղերը պարտավորվում են տարեկան երկու կապել ձեթ տալ Տաթևի վանքին որպես լուսացու-վա-նիկր[2]։ 1532 թ. գրված այս արձանագրության գլխի մասի քարերը թեև թափվել-կորել են, բայց Թանկրիղուլու անունը պահպանվել է, և ընդհանրապես այդ արձանագրությունն ունի այն առավելությունը, որ մի քանի ստորագրողների անվան դիմաց նշանակվել է նաև նրանց գյուղի անունը։ Թանկրիղուլու անվան դիմաց մնացել է մի տեղանվան մաս՝ ՓԱՌԿՈՒՆ. . ., որն առանց տատանվելու կարող ենք լրացնել ՓԱՌԿՈՒՆԵՑԻ. Ստ. Օրբելյանի Գեղարքունիի գյուղերի ցանկն ունի Փառակյանք գյուղը, որը Ջամբռի մեջ, Մաքենյաց վանքի վիճակի գյուղերի ցանկում գրված է Փառակունիք ձևով[3]։

Գյուղի պատմության մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Վայոց ձորի Արատեսի վանքի պատին գրված ընդարձակ մի արձանագրության մեջ, ըստ որի պատմագիր Ստ. Օրբելյանը այդ վանքին է նվիրում Գեղարքունիքի իր սեփական վիճակից ութ գյուղեր, որոնց մեջ և Փառակունիքը[4]։ Այդ բոլոր գյուղերը գտնվելիս են եղել իրար մոտ, այժմյան Մարտունու շրջանում։

Այս գյուղն այժմ անմարդաբնակ է։

Գյուղատեղում պահպանված են արձանագրություններ ունեցող հետևյալ հուշարձանները.

Ա. Հին գերեզմանատան մնացորդներ, մեկը եկեղեցու հարավ-արևմուտք, մյուսը՝ հարավ-արևելք, երկու տեղում էլ կանգնած են XII—XIII դարերի խաչքարեր։ Առաջինում մեկ

[1] Ալիշան, Սիսական, 34։
[2] Լալայան, Ազգ. հանդ., III, 141—142, «Դիվան», II, 27։
[3] «Ջամբռ»։
[4] «Դիվան հայ վիմագրության», III, 126.

ամրոց և մեկ կանգնած խաչքարի վրայի արձանագրությունները տնեն 1273 և 1309 թվականները (№ 1, 2)։

Բ. Եկեղեցի, որ այժմ մի փլատակված շենք է, նորոգված ալաշկերտցի գաղթականների կողմից։ Հյուսիս-արևմտյան անկյունում՝ պատից, կա փոքր մատուռ, ավելի հին. որը շենքի վերանորոգման ժամանակ հարմարեցրել են որպես խորան և եկեղեցու մուտք բացել նրա մեջ։ Այստեղ կան IX—X դարերի խաչքարերի անարձանագիր բեկորներ միայն, իսկ եկեղեցու պատերի և ավագ խորանի ճակատին ագուցվել են XV—XVII դարերի խաչքարեր, մի քանիսն արձանագրված № 3—6։

Գ. Մեծ գերեզմանատուն, տարածված է եկեղեցու հյուսիսում և արևելքում. այստեղ կան բազմաթիվ խաչքարեր և տապանաքարեր, մեծ մասամբ հմուտ վարպետների ձեռքով շինված։ Առանձնապես հետաքրքիր են տապանաքարերի վրայի կենցաղային քանդակներն իրենց բազմազանությամբ և հմուտ կատարումով։ Այս գերեզմանատան մեջ կան Պուղինյան մելիքական տոհմին պատկանող բազմաթիվ հուշարձաններ, իսկ մելիք Թանկրիղուլու ընտանիքինը գտնվում է գերեզմանատան արևմտյան եզրին՝ եկեղեցու պատի մոտ։ Հնագույն թվական ունեցողն այստեղ մելիք Թանկրիղուլու կանգնեցրած մի խաչքարն է՝ 1451 թ.։

Մեր ժողովածուում այս գյուղատեղից ամփոփված է 41 արձանագրություն, որոնք բոլորն էլ հրատարակվում են առաջին անգամ[1]։

## ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**1065.** ԽԱՉՔԱՐ, մեծ (5 մետր բարձր.) գեղաքանդակ. կանգնած է հարավային գերեզմանատան խաչքարերի շարքի կենտրոնում. շրջանակների ստորին մասերում 21 տող.




ՅԱ|ՃԽԱՐ|ՀԱԿԱԼ|ՈՒԹԻ Ա|ՊԱՂԱ |ՂԱ|ՆԻՆ,| Ի ՊԱՐՈՆՈՒ|ԹԻ. ՊՌՈՇՈՅ, ԷՊԻՍԿՈՊ|ՈՍՈՒԹ. ՏՐ ԳՐԻԳՈՐ|ՈՅ ԵՍ ՄԱ|ՆՈՒՉԱՅ Կ|ԱՆԳՆ|ԵՑԻ Զ|ԽԱՉՍ ՅԻՇ|ԱՏ|ԱԿ| ԻՆՁ ԵՒ| ԾՆՈՂ|ԱՑ ԻՄՈՑ. ՅԻՇԵՑԷՔ Ի| ՔՍ. ԹՎ.| ՉԻԲ: (1273):

[1] Սմբատյանը և նրանից առնելով Լալայանը՝ այս գյուղատեղի նկարագրության մեջ ունեն մի արձանագրություն, որն սկսվում է «Իմ որդի (Տանատի) ճարտարապետին . . .» բառերով. այն տեղում չկա և մենք համարում ենք որևէ «ղավառագիտունի» բերանից գրի առնված սովորական վարկած և չենք վերցնում։ Լալայանը ունի մեկ ուրիշը, որն սկսվում է «Աձով մեր Դավիթ Երեցս . . .» և այլն բառերով, նույնպես տեղանվան շփոթմունքի հետևանք է. այն գտնվում է «Կարմիր խարապա» գյուղատեղում, որը մենք վերծանել ենք ավելի ստույգ և տեղավորել իր իսկական տեղում. տե՛ս Գեթաշեն գյուղատեղի №1240 արձանագրությունը։
Սմբատյանց, 533։ Լալայան, XIX, 7։

**1066. *ԽԱՉՔԱՐ***, *զեղաքանդակ, միջատեղից կոտրված, բայց կանգուն. գտնվում է կից նախորդին հարավից, թևերի տրանքներում և ստորին մասում 5 տող.*

ԹՎԻՍ | ՉԾԸ
ԷԵՊ | ՍԿ
ՈՊ | ՈՍ
ԵՍՂՋԱՄԻՐՉԱՀԿԱ
ԿԵՑԻ ԽԱՉՍԾՆՈՂԱՑԻՄՈ

ԹՎ[Ի]Ն :ՉԾԸ: (1309).| Է[Պ]Ի[Ս]Կ|ՈՊՈՍ |ԵՍ Գ[Ա]Ղ[Ձ]ԱՐ[Ի], ՄԻՐՇԱՀ ԿԱ|[Ն]Գ[Ն]ԵՑԱՔ ԽԱՉՍ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ:

Ծանոթ. Հատուկ անունների վերծանումը ենթադրական է:

ԵԿԵՂԵՑՈՒ ՇՐՋԱՊԱՏԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**1067. *ԽԱՉՔԱՐ***, *մեծ, զեղաքանդակ, գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում. քիվին, հյուսիսային կողին և հյուսիսային շրջանակի տակին 11 տող.*

ԵՍՄԷԼԻՔ ԹՂԼԿԲՂՈՒԼՍՈՐԴՒ ՄԷԼԻՔ ՂՈՒԿ

ԱՍԻՆԹ
ՈՌՆԱ
ՂԲՈՒՂԻ
ՆԿԱԿՆ
ԵՑԻՋԻԽ
ԱՉՍԻՓՐ
ԿՈՒԹԻ
ՀՈԳՈՅ
ԻՄՈՅ

Թ : Ջ:

ԵՍ ՄԷԼԻՔ ԹԱՆԿՐԻՂՈՒԼ[Ս], ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ՂՈՒԿ|ԱՍԻՆ, Թ|ՈՌՆ Ա|Ղ-ԲՈՒՂԻ|Ն ԿԱ[Ն]Գ[Ն]ԵՑԻ ԽԱՉՍ Ի ՓՐ|ԿՈՒԹԻ. ՀՈԳՈՅ ԻՄՈՅ: ԹՎ. :Ջ: (1451):

**1068. *ԽԱՉՔԱՐ***, *նախորդից ավելի մեծ և զեղաքանդակ, կից նրան հարավից, կանգնած նույն պատվանդանի վրա. քիվին և ստորին մասում 5 տող.*

ԵՍՄԷԼԻՔԹԱՆՂՐԻՂՈՒԼՍԿԱԿՆԵՑ··

ՍԲԽԱՉՍԻ ՓՐԿՈՒԹԻՀՈԳՈՅՊԱՐՈՆ
ԽՈՆԾ ԱՏԻՆՈՐԷԱՄՈՒՍԻՆ
ԻՄԵՒ ԴՈՒՍՏՐՄԷԼԻՔԽՈՒՏԼԱՅԲԱԽ
ՇԻՆ: ԹՎԿ: Ջ'Ժ'Ե:

ԵՍ ՄԷԼԻՔ ԹԱՆՂՐԻՂՈՒԼ[Ս], ԿԱՆԿ-ՆԵՑ[Ի]| ՍԲ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՅ ՊԱՐՈՆ| ԽՈՆԾԱՏԻՆ, ՈՐ Է ԱՄՈՒՍԻՆ| ԻՄ ԵՒ ԴՈՒՍՏՐ ՄԷԼԻՔ ԽՈՒՏԼԱՅԲԱԽ| ՇԻՆ. ԹՎ.Կ. :ՋԺԵ: (1466):

ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ

**1069. *ԽԱՉՔԱՐ***, *ագուցված է բեմի հյուսիսային պատին. ներքուստ, քիվը տաշած. թևերի շուրջը մնացել է թվականը՝ 1 տող.*

ԹՎ | ՋԿԳ

ԹՎ. :ՋԿԳ: (1514):

**1070. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, ագուցված է հյուսիսային պատի արևելյան մասում, ներքուստ, քիվը ջարդված, գոտի շուրջը և ստորին մասում 3 տող.*



ԹՎ։ ՋՀ
ԻՀՕՐԻՄ ՂՈՒԿԱՍԱՂԻՆ։Կ։
ՏԱՐԵԼԻՔԻԻԱՐ

ԹՎ. ։ՋՀ։ (1521).| . . . . Ի ՀՕՐ ԻՄ ՂՈՒԿԱՍ ԱՂԻՆ. ։Կ։ (60) ՏԱՐԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆ ԱՐԱՐ։

Ծանոթ. *Խաչքարը կանգնեցնողի անունը պիտի լիներ քիվին, որը ջարդված է։ Գերեզմանատան այլ արձանագրություններից երևում է, որ Ղուկաս աղան ունեցել է երկու որդի՝ Մելիքշէկ և Թանկրիղուլի. այս վերջինս հոր հաջորդը ու ժառանգական մելիքն է եղել և, հավանաբար, իր հոր համար խաչքար կանգնեցնողը, բայց ոչ հոր մահվան տարին, այլ շատ ավելի ուշ. որովհետև դեռևս 1451 թ. Թանկրիղուլին մելիք էր, այսինքն հայրը մահացած էր այդ ժամանակ։*

**1071. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, դրված է ընմի պատվանդանի մեջ, քիվին և ստորին մասում 2 տող.*

· · · · · ԱՌԵԽԱԽՎԱԱԿԱԲՀԱՅԻՆ



ԹՎ+++ՋՂԶ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՎԱ⌊Ս⌋ՅԱԿԱ ԲԱՀԱՆԱՅԻՆ։| ԹՎ. ։ՋՂԶ։ (1547)։

**1072. ԽԱՉՔԱՐ.** *ագուցված է ընմի պատվանդանի մեջ, կողքանց, քիվին 2 տող.*

ԵՍՏՐՈՀԱՆԷՍԿԱԿԵԻ ԽՍ
· · · · · · · · · · · · · ՀՈՐԻՄՈՅՄՐ

ԵՍ ՏՐ. ՈՀԱՆԷՍ ԿԱ⌊Ն⌋Կ⌊Ն⌋Ե⌊Ց⌋Ի ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ(Ւ)Ն ՀՕՐ ԻՄՈՅ, Մ⌊Օ⌋Ր ⌊ԻՄՈՅ⌋։

**1073. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, հարավային կողին հեծյալ, նիզակով շամփրել է վիշապին, ապա առյուծը ցատկել և կծոտում է նրան թիկունքը. գտնվում է նախորդների մոտ, շրջանակներին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԿԻՍՏՊԱՐՈՆՂԱՍՈՒՄԻՆՈՐԴԻՄԷԼԻՔԹԱՂՐԻՂՈՒԼԻՆ
ԹՈՌՆՄԷԼԻՔՂՈՒԿԱՍԻՆՈՐԻ։Ե։ԺՈՒԵՑԱՒԻՔՍԹՎԱԿՋԺԵ

ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ՊԱՐՈՆ ՂԱՍՈՒՄԻՆ, ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ԹԱՆԳՐԻՂՈՒԼԻՆ, ԹՈՌՆ ՄԷԼԻՔ ՂՈՒԿԱՍԻՆ, ՈՐ Ի ։Ե։ (5) ԱՄԵԱՅ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ. ԹՎ. ։ՋԺԵ։ (1466)։

Ծանոթ. *Թերևս ։ԻԵ։ (25), որը գրիչը սխալմամբ է անջատել։*

1074. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *օրորոցաձև, հարավային կողին կենդանական տեսարան, գտնվում է նախորդների մոտ. շրջանակներին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԿԻՍՏՊԱՌՆԷԼԻԽԱՆԻՆՈՐԴԻՄԷԼԻՔԹԱՆՂՐԻՂՈՒԼԻՆԹՈՌՆ
ՄԷԼԻՔՂՈՒԿԱՍԻՆՈՐ:Լ:ԱՄԵԱՑՓՈԽԵՑԱՒԻՔՍԱՅՍ:Բ:ԵՂԲԱՐՍՄԱՀՈՎՄԵՌԱՆԹՎՋՁԵ:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐ[ՈՆ] ՆԷԼԻԽԱՆԻՆ, ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ԹԱՆԳՐԻՂՈՒԼԻՆ,
ԹՈՌՆ| ՄԷԼԻՔ ՂՈՒԿԱՍԻՆ, ՈՐ :Լ: (30) ԱՄԵԱՑ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ.
ԱՅՍ :Բ: (2) ԵՂԲԱՐՍ ՍՈՒՐՈՎ ՄԵՌԱՆ. ԹՎ. :ՋՁԵ: (1536):

1075. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *օրորոցաձև, հարավային կողին կենդանական տեսարան, արևելյան ճակատին 6 տող.*

ԹՎ ՋՂ
ԱՅՍԷՀԱՆԳԻ
ՍՏՄԷԼԻՔԱՒՎԱՆ
ԴՈՒԿԻՆՈՐԷՈՐԴ
ԻՄԷԼԻՔԹԱՆԳՐ
ԻՂՈՒԼԻՆ

ԹՎ. :ՋՂ: (1541)| ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ՄԷԼԻՔ ԱՒՎԱՆ|ԴՈՒԿԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ԹԱՆԳՐ|ԻՂՈՒԼԻՆ:

Ծանոթ. *Օվանդուկ անվան սկզբում Ա-ի փոխարեն Օ պատահում է հաճախ*

1076. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *օրորոցաձև, մեծ, հյուսիսային կողին քանդակած ձի, առանձին բռնած մարդ, որի ձախ ձեռքին երկփողանի սրինգ է. աջից կերպարի պնակ, հաց և երկու գավ ու մկրատ. ապա սազ նվագող, գտնվում է գերեզմանատնից դեպի հյուսիս, առանձնակի, 150—200 մ-ից. արձանագրությունն սկսվում է հարավային կողից և վերջանում հյուսիսայինում, 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳՍՏՄԷԼԻՔՊԷԿԻՆՈՐԴԻՂՈՒԿԱՍԱՂԻՆԵՂԲԱՐՄԷԼԻՔԹԱՆՂՐԻՂՈՒԼԻՆ

ՈՐԵՐԵՍՆԱՄԵԱՑՓՈԽԵՑԱՒԻՔՍԵԹՈՂՍՈՒԳԱՆՄԽԻԹԱՐԹՎՋԶ:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԷԼԻՔ ՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ՂՈՒԿԱՍ ԱՂԻՆ, ԵՂԲԱՐ ՄԷԼԻՔ
ԹԱՆԳՐԻՂՈՒԼԻՆ.| ՈՐ ԵՐԵՍՆԱՄԵԱՑ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ., ԵԹՈՂ ՍՈՒԳ
ԱՆՄԽԻԹԱՐ. ԹՎ. :ՋԶ: (1457):

1077. ԽԱՉՔԱՐ, *գեղաքանդակ, կանգնած է շուրջի մեջ հարավից. քիվին, թևերի արանքներում և հարավային կողին 5 տող.*

ԵՍՊԱՐՈՆՊԱՊԱՋԱՆՍԿԱՆԿՆԵՑԻԶԽԱՉՍ

ԹՎ | Ջ
ՂԹ

ԳԱՒՋԱԼ
ԱՂԻՆ

ԵՍ ՊԱՐՈՆ ՊԱՊԱՋԱՆՍ ԿԱ[Ն]Կ|[ՆԵ]ՑԻ ԶԽ[Ա]Չ[Ս]| ԳԱՒՋԱԼ ԱՂԻՆ.|
ԹՎ. :ՋՂԹ: (1550):

**1078. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, մեծ, հարավային կողին՝ թամքած ձի, որի սանձից բռնել է պատանի, կենտրոնում ննջեցյալ, սրանց շուրջը 40 լար ունեցող քանոն, մկրատ, դաշույն, գինու գավ, հաց. գտնվում է նախորդների մոտ. արևելյան ճակատին տապանագիրը և արևմտյանին՝ թվականը. 9 տող.*

ԱՅՍԷՀՆ
ԳԻՍՏՂԱՍՌ
ՃԶԱԻՆՐԷ
ՐԴԻԲԷԱՃՆ
ԻՆԵՂԲԱՄՏԻ
ԲԷԿԻՆԱԱՄԱՑ
ԹԱԳԱՐԻՆՀՆ
ԳԱԻՔՍ




ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՂԱՍՈՒ|ՍՃԱՆԻՆ, ՈՐ Է|
ՈՐԴԻ ԲԱԲԱՃԱՆ|ԻՆ, ԵՂԲԱՐ ԱՏԻ|ԲԷԿԻՆ :Ա:
ԱՄԱՑ| ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՆԳԱԻ Ի ՔՍ|
ԹՎ. :ՌԻ: (1571):

Ծանոթ. *Թագավոր գործ է ածված նորապսակի իմաստով։*

**1079. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, հարավային կողին ննջեցյալ, առջևը երկու գավ և հաց. գտնվում է նախորդների մոտ. արևելյան ճակատին 6 տող.*

ԱՅՍԷՀԱԿԻ
ՍՄԵԼՔՊԱ
ՊԱՃԱՆԻՆՈ
ՐԴԻՃՔԹԱԿՐ
ՂՈՒԼԻՆԹՎՌ
ԻԷ

ԱՅՍ Է ՀԱՆԿԻ|(Ս)Տ ՄԷԼԻՔ ՊԱՊ|ԱՃԱՆԻՆ. Ո|ՐԴԻ
ՄԷ(ԼԻ)ՔԹԱ(Ն)ԿՐ|(Ի)ՂՈՒԼԻՆ. ԹՎ. |:ՌԻԷ: (1578):

**1080. ԽԱՉՔԱՐԵՐ,** *երեք հատ. գտնվում են գերեզմանատնից 150—200 մետր դեպի հյուսիս, առանձնակի, իրար կից. Ա. Հարավայինի քիվին և թևերի շուրջը 2 տող.*

ԵՍԱՊՈՎՍՂԱԶՐԿՆՑԽՉՍԲԿԻՍՈՒԼՂ




ԵՍ ԱՊՈՎՍ, ՂԱԶԱՐՍ Կ(ԱՆԿ)Ն(Ե)Ց(ԱՔ) Խ(Ա)ՉՍ
Բ(Է)ԿԻ ՍՈՒԼԴ(ԱՆԻՆ). ԹՎ. :ՌԺԹ: (1570):

**1081. Բ.** *Կենտրոնում կանգնածի ճակատը խիստ վնասված է, մնում է շրջանակներին.*

· · · · · ԼԱԼ · · · · · · · ·
Խ ... ԱՀՍԻՅ

ԻՇՍՄ

ԲԱ
ԴԱ
ԼԻՆ
ՉԻԿ
ԱՐՈ
ՂԷԹ
ԱԱ
ՈՎ
ՔԱ
ՋՈՒ
ՄՔՈ
ՂՈՐ
ՈՒԼ
ԴՈՒՔ
ՂԱՂ

ԱԼԹՍ
ՄԻՆ

Ծանոթ. *Բացի ճակատի վնասվածքից մնացած մասերում էլ արձանագրությունն անորոշ է, բացի ԲԱԴԱԼ անունից, ըստ երևույթին ձախ շրջանակին հենց սկզբից չգրվելով՝ իմաստը մնացել է թերի։*

**1082.** *Գ. Հյուսիսային սալին մասում 3 տող.*

ԵՍԱՊՈՎՍԿԱՆ
ԿՆԼ ՑԻ:ՍԼ ԽԱՀ
ԻԲԱՐԽՍԿՈՂԱ . . . . .

ԵՍ ԱՊՈՎՍ ԿԱՆ|ԿՆԵՑԻ ԽԱՉ⌊Ս⌋| Ի ԲԱՐԵ-
Խ⌊ԱԻ⌋Ս ԿՈՂԱ՛ԿՑԻՆ ԻՄ . . . . .

Ծանոթ. *Այս երեք խաչքարերն անշուշտ մի գերդաստանի են վերաբերում. սրանց մոտ է նաև № 8 տապանաքարը՝ Մելիքպէկ Աղբուղալյանի տապանագրով, և, հավանական է, որ հենց նրա գերդաստանի անդամներն են այստեղ թաղված։ Այս դեպքում Մելիք Թանղրի-ղուլի կրտսեր եղբոր, Մելիքբէկի գերդաստանի գերեզմանոցն է սա, առանձնացած։*

**1083.** *ԽԱՉՔԱՐ, հասարակ, քիվին և թևերի շուրջը 2 տող.*

ԵՍԱ· · ·ՍԿՆՑԻԽՁԱՆՃՐԴՆ




ԵՍ Ս՛ՄԻՐ՛Ս Կ⌊Ա⌋Ն⌊ԿՆԵՑ⌋Ի ԽԱՉՍ
ԱՄ⌊ՈՒ⌋Ս⌊Ի⌋Ն ՄԱՐԴ⌊ՈՒՄԻ⌋Ն| ԹՎ.
:ՌԺԹ: (1570):

Ծանոթ. *Խիստ անարվեստ գրչությամբ է, ՄԱՐԴՈՒՄԻՆ ենթադրական է։*

**1084.** *ԽԱՉՔԱՐ, հասարակ, քիվին և թևերի շուրջը 2 տող.*

ԽՉՍԲՃԷԽԱԻՍՍաՍՐԻՆԹ




ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՍՐԱՍԻ՛ՐԻՆ.
ԹՎ.| :ՌԼԹ: (1590):

Ծանոթ. *Գրչությունն անարվեստ է. ՍԱՍԻՐ վերականգնումը ենթադրական է. հնարավոր է ԱՄԻՐ։*

**1085.** *ԽԱՉՔԱՐ, հասարակ, քիվին 3 տող.*

ԽԱՀԲԱՐՈԻԷ+ԷՂՈԻՊԱԴՃՐԳԻ
ԳԱԼՈՍՄՃԷԼԻ+Խ̅ԹՈԻԻ
ՃԱԼԻՍԱԲՍ̅ՈԷԱ՛ՆՈ̅Ղ

ԽԱՉ⌊Ս⌋ ԲԱՐԷԽԱԻՍ ՔԵՂՈՒՊԱԴ⌊ԻՆ⌋,
Մ⌊Ի⌋ՐՁԻ⌊Ն⌋,| ԳՍԼՈ⌊Ի⌋ՍՏ⌊ԻՆ⌋, ՄԵԼԻ-
Ք⌊ԻՆ⌋, ԽԱԹՈՒ⌊ՆԻՆ⌋| . . . . . .

Ծանոթ. *Գրչությունը խիստ անարվեստ։*

**1086.** *ԽԱՉՔԱՐ, հասարակ, քիվին 2 տող.*

ԵՍԱՃԻՐԿԱՆԿՑԻԽՀ̅Ս+ԿԽ̅Է
ԹՈԻՐՎԱԴԻՆՋԷԱ̅Ս .

ԵՍ ԱՄԻՐ ԿԱՆԿ⌊ՆԵ⌋ՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹ̅Ի̅|
ԹՈՒՐՎԱԴԻՆ . . . . .

Ծանոթ. *Շարունակության մեջ թերևս ։ՋԷ։ թվականը լինի։*

1087. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, մեծ, հարավային կողին չորս պարողներ, ձեռքերին գավ ու հացեր, շրջանակներին 3 տող.



Թվ. ։ՌՀԳ։ ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԱԿՈ-ԲԻՆ, ՈՐԴԻ ՍԵՎԵՐԵՍԱՑ ԻՐԻՑԻԱ. ՄԵՌ|ԱԻ՝ ԵԹՈՂ ԱՆՄԽԻԹԱՐ ՍՈՒՔ ԾՆՈՂԱՑՆ։

1088. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, մեծ. հարավային կողին հեծյալ, առջևը կանգնած սաղ նվագող, ապա գավ և հաց բռնած մարդ և մի պարող, սրանց արանքներում ջրաման, գինու գավ և երկփողանի սրինգ, գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում, շրջանակներին.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԷԼՔՈՒՄԻՆ, ՈՐԴԻ ՏԷՐ| ԳՐԻԳՈՐԻՆ. |Թվ. ։ՌՀԳ։ (1624)։

1089. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ. գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում, երեսին 9 տող.



ԱՅՍ Է Հ|ԱՆԳԻՍ|Տ ՊՀԱԼ|ՈՒԻՍ,| ԿՈՂԱԿ|ԻՑ ԹԻ|ՄԻ ՔՐՈՋ|ՎԻՆ. Թվ. ։ՌՃ։ (1651)։

1090. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային կողին հեծյալ, աջ ձեռքին նիզակ, մյուսին՝ կեռ դաշույն, առջևում փախչող եղջերու. սրանցից ներքև երկլարանի սաղ նվագող և գավ բռնած մարդ. երկուսի արանքում քյամանչա դրած, իսկ առջևներում հացով ու պնակներով լիքը սեղան. արևելյան ճակատին ննջեցյալ. գտնվում է նախորդի մոտ. շրջանակներին ստուգցիկ տառերով 3 տող.



ԽԱՉՍ Բ|ԼԱ|ՐԵԽՍՍ|ՊԱՐՈՆ ԱՍՏՈՒԱ-ԾԱՑԴՈՒՐԻՍ, ՈՐԴԻ ԹԻՄԻՆ |Թվ. ։ՌՃԾԱ։ (1702)։

***1091. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, օրորոցաձև, գեղեցիկ քանդակներով, հարավային կողին ուտելիքներով լեցուն սեղանի շուրջը նվագող, երկու պարող և երկու հոգի էլ ղավեր ու պնակներ բռնած մարդիկ, անկյունում գրված բաղմալար քանոն. հյուսիսային կողին խորաններ ու խոչեր, շրջանակներին 5 տող.*

ԿԱՄԱՒՆԱՅԵՍՇԱՀ
ՆԱՏԱՐՍԵՒԿՈՂԱԿԻՑՆԻՄԻՓԱԿՆԻԳԵՂՋԵՆ
ՎԱՂԱԹՆՈՅԿԱ
ՆԳՆԵՑԱՔՍԲԽԱՉՍԲԱՐԵԽՕՍՈՐԴՈՅՄԵՐ
ՈՅԷՎԱՁԻՆԹՎԻՆՌՃԺ

Խ | Ա
Հ | Ս

ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՇԱՀ|ՆԱՏԱՐՍ ԵՒ ԿՈՂԱԿԻՑՆ ԻՄ ԻՓԱԿՆ Ի ԳԵՂՋԵՆ|
ՎԱՂԱԹՆՈՑ՝ ԿԱ|ՆԳՆԵՑԱՔ ՍԲ Խ|Ա|ՉՍ ԲԱՐԵԽՕՍ ՈՐԴՈՑ ՄԵՐ|ՈՑ
ԷՎԱՁԻՆ. ԹՎ. :ՌՃԺ: (1661): ԽԱՉՍ:

*Ծանոթ. Վերջին բառը գրված է արևելյան ճակատին, խաչի թևերի արանքներում։*

***1092. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, օրորոցաձև, հարավային կողին մեծ սեղան՝ լեցուն ուտելիքներով և հացերով, պնակի մեջ ձկներ, շուրջը նվագող երկլարանի սազ, երեք հոգի պարողներ և գինու մեծ գավ. հյուսիսային կողին խորաններ ու խաչեր. շրջանակներին արձանագրություն. գտնվում է եկեղեցուց արևմուտք, մոտ 150 – 200 մետր նախորդի մոտ.*

ԿԱՄԱՒՆԱՅԵՍՄԷ
ՀՐԱՊՍՈՐԴԻԽԱՒՇՆԱՏԱՐԻՆԳԵՂՋԷՆՎ
ԱՂԱԹՆՈՅԿԱՆ
ԳՆԵՑԻՍԲ
ԽՉՍԲԱՐԵԽՍ
ՈՐԴՈՅԻՄՈՅ
ԱԾԱՏՈՒՐԻՆ
Թ Վ Ի Ն ՌՃԺԳ

ԿԱՄԱՒՆԱՅ. ԵՍ ՄԷՀ|ՐԱՊՍ ՈՐԴԻ ԽԱՒՇՆԱՏԱՐԻՆ, ԳԵՂՋԷՆ Վ|ԱՂԱԹՆՈՅ
ԿԱՆ|ԳՆԵՑԻ ՍԲ.| ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ| ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ:
ԹՎ. :ՌՃԺԳ: (1664):

***1093. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, հինգ հատ, իրար կից, գտնվում են գերեզմանատան հյուսիսային մասում. բոլորն էլ մեծ և երկաստիճան.*

***Ա.** Երեսին 2 տող.*

ԵՍՄՈՒՍԱՀԻՊՍՀԱՆԳՈՒՑԻՏԱՊԱՆՍՄԱՒՐՆԻՄՈՅՊԷԿԻՒՆԻՆ
Թ:ՌՃԺԹ

ԵՍ ՄՈՒՍԱՀԻՊՍ ՀԱՆԳՈՒՑԻ ՏԱՊԱՆՍ ՄԱՒՐՆ ԻՄՈՑ ՊԷԿԻՒՆԻՆ.|
ԹՎ. :ՌՃԺԹ: (1670):

*1094. Բ. ԵՐԵՍԻՆ 5 տող.*

ԱՅՍԷՀԱ
ԳԻՍՏՄԵԼՔՈ
ԻՄԻՆՈՐԴԻՄ
ՈՒՍԱՀԻԲԻՆ
ԹՎՌՃԻ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻ[Ս]Տ ՄԵԼՔՈ|ԻՄԻՆ, ՈՐԴԻ
Մ|ՈՒՍԱՀԻԲԻՆ.| ԹՎ. :ՌՃԻ: (1671):

*1095. Գ. ԵՐԵՍԻՆ 8 տող.*

ԱՅՍԷՀԱՆ
ԳԻՍՇՄՈՒՍ
ԱՀԻԲԻՆՈՐ
ԴԻԷԽԱՆԻ
ՆԳԵՂՉԷ
ՆՎԱՂԱԹ
ՆՈՅԹՌՃ
ԼԷ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄՈՒՍ|ԱՀԻԲԻՆ, ՈՐԴԻ
ԷԽԱՆԻ|Ն. ԴԵՂՋԷ|Ն. ՎԱՂԱԹ|ՆՈՅ.
ԹՎ. :ՌՃԼԷ: (1688):

*1096. Դ. ԵՐԵՍԻՆ 6 տող.*

ԱՅՍԷՀԱՆ
ԻՍՇԷԽԱՆԻ
ՆՈՐԴԻՄՈ
ԻՍԱ·ԻԲԻ
Ն
ԹՌ· · ·

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԷԽԱՆԻ|Ն ՈՐԴԻ ՄՈՒՍԱ[Հ]Ի-
ԲԻ|Ն. ԹՎ. :Ռ: · · · ·

Ծանոթ. *Թվականի տասնավորն ու միավորը ջարդված են, բայց ժամանակով մոտ պետք է լինեն նախորդներին։*

*1097. Ե. ԵՐԵՍԻ ՉՈՐՍ ԿՈՂՄԻ ՇՐԹՈՒՆՔՆԵՐԻՆ. 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ
ՊԱՐՈՆԼԱԼԻՆՈՐԴԻՄԵԼԻՔՏԱԹԼՈՒԻՆԳԵՂՋԷՆ
ԳՈՐԷՍՈՅԵԿԵԱ
ԼԱՍՏԵՒԻՇԻՆԵԼՏԱՆԱՆԳԱՒԳԵՐԱՆԻԳԼԽՈՆԵՒՄԵՌԱ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ|Տ Պ[Ա]ՐՈՆ ԼԱԼԻՆ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՏԱԹԼՈՒԻՆ,
ԳԵՂՋԷՆ ԳՈՐ|ԷՍՈՅ. ԵԿԵԱ|Լ ԱՍՏ ԵՒ ՇԻՆԵԼ ՏԱՆ՝ ԱՆԳԱՒ
ԳԵՐԱՆ Ի ԳԼԽՈՆ ԵՒ ՄԵՌԱՒ։

Ծանոթ. *Ժամանակով մոտ պետք է լինի նախորդներին, որովհետև գտնվում է Ա-ի և Բ-ի արանքներում։*

*Այս տապանագիրն առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն բանով, որ հայրենակցության հասկացողության երևույթ է դեռևս այն ժամանակ։ Օտար մարդը թաղվել է Մուսահիբի ընտանեկան գերեզմանների շարքում լոկ այն պատճառով, որ նույնպես եկվոր է և այն էլ նույն Զանգեզուրից։ Գորիսն ու Վաղադինը իրար մոտ են Զանգեզուրում։*

1098. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսի չորս կողմի շրջանակներին 4 տող.*

ՌՒԽԱՆԻՆՈՐԴԻՋԼԱԼՆՎԱՂԱԹՆՌԵԿՕՏԵՂՍ

ՅԱԺՀԱՆԳԻՍՏ

ԿԱՄԷՐԳՆԱԼ

+ՅՎՋՎՒԵՆ ՈԺՎՕԵՂՈՀԿՎԳՂՆԳՄ

ՅԱ͜ՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԹՈՒԽԱՆԻՆ, ՈՐԴԻ Ջ͜ԱԼԱԼԻՆ. ՎԱՂԱԹՆՈՒ ԵԿՕ ՏԵՂՄ| ԿԱՄԷՐ ԳՆԱԼ| ՏԵՂՆ ԻՒՐ ՀԱՆԳՍ Ի ՔՍ. ԹՎ. ։ՌՃԻԷ։ (1678)։

Ծանոթ. *Սրա աջ ու ձախ կողմերին նման տապանաքարեր են, բայց անարձանագիր։ Գտնվում են գերեզմանատան հյուսիսային մասում։*

1099. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան հյուսիսային մասում, երեսին 7 տող.*

ԱՅՍԷՀԱԳ
ԻՍՏՅԱՏԻՆ
ԻՍՈՐԴԻՊԱ
ՂԻՆԹՌ
ՋԽԴ
ԹՈՌՆՎԻՐԱՊ
ԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՅԱՏԻՆ|ԻՍ, ՈՐԴԻ ՊԱ|ՂԻՆ, ԹՈՌՆ ՎԻՐԱՊ|ԻՆ, ԹՎ. ։ՌՃԽԴ։ (1695)։

1100. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային կողին երկու հեծյալներ, մեկը կանգնած է ձիու վրա և պարում է (հավանաբար կին), մյուսը նստած և հրացանակիր, ներքևում ևս երկու մարդ, ձեռքերին ծաղիկ և գավ ու հաց. արանքներում՝ հրացան և դաշույն. շրջանակներին 3 տող.*

ԿՐՋԱՅՀԱՍԱԿԹԱՍԱԼԻՍՈՐԴԻՊԱՒ

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽՕՍ

ՂՕՋԽՎԻՆԹՎՌՃԽԸ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ| ԿԱՐՃԱՅՀԱՍԱԿ ԹԱՍԱԼԻՍ, ՈՐԴԻ ՊԱԻ͜ՂՈՍ͜| Ք͜Օ͜Խ-ՎԻՆ. ԹՎ. ։ՌՃԽԸ։ (1699)։

1101. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 6 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՀԵՂԻՆԱ
ՐԻՍԿՈՂԱԿ
ԻՑՏՐԱՒԵՏԻ
Ն
ԹՎՌՃԾ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՀԵՂԻՆԱ|ՐԻՍ, ԿՈՂԱԿ|ԻՑ ՏՐ ԱՒԵՏԻ|Ն| ԹՎ. ։ՌՃԾ։ (1701)։

1102. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հարավային կողին թամքած ձի, սանձից բռնած պատանի. երկլարանի սազ նվագող, որի մոտ կան նաև երկփողանի սրինգ և մի այլ գործիք. երկու պարողներ՝ արանքներում հաց ու գավ. առջև-ներում մեծ սեղան՝ լիքն ուտելիքներով. շրջանակներին 3 տող.



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ| ԹԱԹԷՈՍԻՍ, ՈՐԴԻ ՏՐ ԱԻԵՏԻՍԻՆ. |ԹՎ. :ՌՃԾԱ: (1702):

1103. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հարավային կողին ղուլթան, առանց լըծ-կանների, երկու լուծով և ակներով, լծերի, անիվների և մաճի մոտ կանգնած մեկական մարդ, ընդամենը չորս հոգի. անիվների մոտ կանգնածը մի ձեռքով բռնել է ուրագ, մյուսով ինչ-որ գործիք. հորիկի մոտ՝ մեծ գավ և հաց. շրջա-նակներին և գլուխների արանքներում 4 տող.



ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄՈՃՈՒՄԻՆ, ՈՐԴԻ ԱԽԱՆ|ԱՐԻՆ. ԹՎ. :ՌՃԾԷ: (1708):

1104. ԽԱՉՔԱՐ, կլոռվին խրված գետնի մեջ քիվին 1 տող.



ԵՍ ՄԵԼԻՔ ՍՏԵՓԱՆՍ ԿԱ|ՆԿՆԵ|Ց|ԱՔ| ԽԱՉՍ ՀԱՒՐ ՄԵՐ ՓԱՐՄ|ԱԶԻՆ|:

Ծանոթ. ՓԱՐՄԱԶ անունը՝ հավանաբար։

1105. ԽԱՉՔԱՐ, քիվին 1 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՃԱՆԴ.ՈՒՐՊԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ . . . :

## ՆԵՐՔԻՆ ԴԵՏԱՇԵՆ (ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ԱԴԻԱՄԱՆ, ՀՆՈՒՄ՝ ԿՈԹ)

Գեղարքունի գավառի ամենամեծ գյուղն է եղել սա ըստ Ստ. Օրբելյանի ցուցակի, 20 չափ հարկով։ Հայոց թագավորության ժամանակ եղել է գավառի կենտրոնը և իշխանական նստոցը։ Աղբյուրների մեջ կոչվել է գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ։ Գյուղը ներկայումս տեղավորված է ձորամիջին, Իշխանոցգետի ափերին, բայց հնում այն տարածված է եղել նաև գյուղի հարավի բարձրավանդակում, երկու կիլոմետրից ավելի երկարություն ունեցող թմբա-շատ հարթության վրա և հասել է մինչև Վերին Դետաշենի տակը, որից բաժանվել է Իշխա-նագետի հոսանքի նեղ ձորով։ Այդ բարձրավանդակի վրա մնում են բազմաթիվ շինությունների հիմնապատեր, որոնք հետզհետե մաքրվում և հերկվում են։ Այս վայրը տեղացիներն